

Թիւ 24777

Փետրուար 18, 1976

Արժանաշնորհ

Տ. Գէորգ Բհնյ. Առաքելեան
Հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական Խորհուրդի
Պինկհամթըն.

Սիրելի Տէր Գէորգ,

Ստացած ենք Փետրուար 1, 1976 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը
հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ Յունուար 25ին զուամբուած համայնքիդ
ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի չորս անդամոց ընտ-
րութիւնը, եւ ներկայացնելով բուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք
ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամնե-
րը, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան դրկել ներփակեալ հարցարանները եւ
ծխական Խորհուրդի նորընտիր Գիւանհանդամոց անունները:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր
պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի
պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր
սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տորթ. Վահէ Կարապետեան
Ժորճ Ռէմէպեան
Աշամ Գրանեան
Էտուրթ Սերայտարեան